ոչ-պաշտոնական թարգմանություն

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ
Փետրվարի 21 – մարտի 14, 2017թ.
Մարտի 17, 2017

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

- 2016 թ. դեկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը խորհրդարանական ընտրությունները նշանակեց ապրիլի 2-ին: 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում բարեփոխվեց Սահմանադրությունը՝ փոխելով Հայաստանի քաղաքական համակարգը կիսանախագահականից խորհրդարանականի: Այս ընտրությունները կլինեն առաջին ընտրությունները, որոնք անցկացվելու են նոր համամասնական ընտրակարգով:

- Խորհրդարանական ընտրությունները կարգավորող իրավական դաշտը համապարփակ է, սակայն խրթին. այն էապես փոխվել էր 2016 թ. բոլոր կողմերի ներգրավմամբ՝ բարեփոխումային գործընթացի արդյունքում, եւ, որը ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծամասնության կողմից գնահատվել է որպես քայլ առաջ ընտրական գործընթացի նկատմամբ ընդհանուր վստահությունը բարձրացնելու տեսանկյունից: Հաշվի են առնվել ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում արված մի շարք հանձնարարականներ: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ի սկզբանե ներգրավված են եղել Ընտրական օրենսգրքի նախագծի քննարկումներում, բայց տեքստի վերջնական տարբերակին չեն համաձայնել, քանի որ նրանց կոչերը՝ մեղմելու տեղական դիտորդներին առնչվող սահմանափակումները հաշվի չեն առնվել:

- Ընտրությունների անցկացման վարչարարությունը եռաստիճան է, եւ կազմում է՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ), 38 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸԸՀ) եւ 2,009 Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ): ԿԸՀ-ն պարբերաբար հրավիրում է բաց նիստեր եւ հրապարակում է ընդունված որոշումները իր կայքում: ՏԸՀ-ները կազմավորվել են Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից մարտի 11-ին: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ զրուցակիցներ մտահոգություն են հայտնել քվեարկության նոր ընթացակարգերով աշխատելու՝ ՏԸՀ-ների կարողությունների վերաբերյալ:

- Ընտրողների գրանցումը իրականացվում է պասիվ եղանակով եւ հիմնվում է բնակչության ռեգիստրի վրա: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ–ի զրուցակիցներն ընդհանուր առմամբ դրական են գնահատել ընտրացուցակների ճշգրտությունը: Ի կատարումն օրենքի եւ մեկ այլ անձի փոխարեն քվեարկելու փորձերը կանխելու նպատակով՝ ԿԸՀ-ն պատրաստվում է ընտրություններից հետո հրապարակել ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորված պատճենները:

- Քվեարկության օրը խախտումները կանխելու համար, ընտրողների ինքնությունը հաստատվելու է Ընտրողների նույնականացման էլեկտրոնային սարքավորումների (ԸՆՍ) միջոցով: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծամասնությունը ԸՆՍ-ների կիրառումը դրական է գնահատել: Սակայն, ԸՆՍ-ների ծրագրային ապահովման մշակման եւ փորձարկման ուշացումով պայմանավորված՝ մտահոգություններ են արտահայտվել քվեարկության օրն այդ սարքերի ֆունկցիոնալ լինելու վերաբերյալ:

- Բոլոր կողմերի ներգրավումն ապահովող գործընթացի արդյունքում ԿԸՀ-ն գրանցել է հինգ քաղաքական կուսակցությունների եւ չորս կուսակցությունների դաշինքների թեկնածուների ցուցակներ, որտեղ ընդգրկված 1,558 թեկնածուների 30 տոկոսը կանայք են:

- Պաշտոնական նախընտրական քարոզարշավը մեկնարկել է մարտի 5-ին: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծամասնության կողմից հնչեցվել են համատարած ընտրակաշառք առաջարկելու դեպքերի վերաբերյալ մեղադրական հայտարարություններ: Բավականին տարածված է նաեւ ընկալումն առ այն, որ քարոզարշավն իրականացվելու է ընտրողների ճնշման եւ վախի մթնոլորտի համատեքստում:

- Լրատվական միջավայրում գերակշռում է քաղաքական առնչություններ ունեցող հեռուստատեսությունը: Ազատ համացանցը նպաստում է քաղաքական բազմակարծությանը ու քննադատական կարծիքների արտահայտմանը: Մասնակիցներին մինչ օրս տրամադրվել է հանրային հեռուստատեսությամբ հավասար քանակությամբ անվճար եթերաժամանակ եւ վերջիններս նաեւ ունեն հավասար պայմաններով քարոզչաժամանակ գնելու իրավունք:

- Մասնակիցները ներկայացնում են կանոնավոր հայտարարագրեր քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ, ներառյալ մինչեւ քվեարկության օրը: Չնայած ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ–ի նախորդ հանձնարարականի, այսպես կոչված, կազմակերպչական ծախսերը, ինչպիսիք են՝ շտաբերի, տրանսպորտի եւ հաղորդակցմանը առնչվող ծախսերը չեն ներառվում հայտարարագրի մեջ:

- Իրավական դաշտն ապահովում է միջազգային եւ տեղական դիտորդական հնարավորությունը եւ իրավունք է վերապահում վստահված անձանց ներկա գտնվել ընտրատեղամասերում: Ընտրատեղամասերում կուտակումների հնարավոր դեպքերը հասցեագրելու նպատակով, տեղական դիտորդների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ ընտրատեղամասերում գտնվելու թվաքանակի վերաբերյալ նախատեսվել են որոշ սահմանափակումներ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները եւ լրագրողները մտահոգություն են հայտնել վերոգրյալ սահմանափակումներին առնչվող դրույթների վերաբերյալ:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2016թ. դեկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը խորհրդարանական ընտրությունները նշանակեց ապրիլի 2-ին:[1] Հայաստանի Հանրապետության վարչապետի հրավերի հիման վրա, ինչպես նաեւ հիմք ընդունելով նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը իրականացրած Կարիքների գնահատման առաքելության արդյունքում ստացված առաջարկությունները, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) Ընտրությունների դիտորդական առաքելությունը (ԸԴԱ) մեկնարկեց իր աշխատանքները փետրվարի 20-ին[2]: Այն

[1] Հայ Ազգային Կոնգրեսը (ՀԱԿ) նախաձեռնել էր ստորագրահավաք՝ վիճարկելու ՀՀ նախագահի հրամանագիրն այն հիմքով, որ Սահմանադրության անցումային դրույթների համաձայն՝ ընտրությունները պետք է անցկացվեն ավելի ուշ, սակայն, նրանց չի հաջողվել հավաքել պահանջվող 27 պատգամավորի ստորագրություն:

[2] Տես՝ նախորդ OSCE/ODIHR reports on Armenia.

գլխավորվում է դեսպան Յան Պետերսենի կողմից եւ բաղկացած է Երեւանում տեղակայված 14 անդամներից կազմված հիմնական անձնակազմից եւ 28 երկարաժամկետ դիտորդներից (ԵԴ), որոնք մարտի 1-ին գործուղվել են հանրապետության մարզեր: ԸԴԱ-ի անդամները ներկայացնում են ԵԱՀԿ-ին անդամակցող 23 պետություններ: Քվեարկության օրվա գործընթացերը դիտարկելու նպատակով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը մասնակից երկրներից հայցել է թվով 250 կարճաժամկետ դիտորդներ:

III. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հայաստանը կիսանախագահական հանրապետությունից անցում է կատարում խորհրդարանական քաղաքական համակարգի՝ նախագահի լիազորությունները կրճատելով ի օգուտ վարչապետին եւ խորհրդարանին: Այս ընտրությունները լինելու են առաջին ընտրությունները, որոնք անցկացվելու են նոր համամասնական ընտրակարգով:

Նախորդ՝ 2012թ. խորհրդարանական ընտրություններին Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) ստացավ 69 մանդատ եւ ձեւավորեց կառավարություն: 2016թ. վերջինս ստորագրեց համագործակցության համաձայնագիր Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) հետ, որը խորհրդարանում ուներ 5 մանդատ: Խորհրդարանական ընդդիմությունն են՝ Բարգավաճ Հայաստանը՝ 33 մանդատ, Հայ Ազգային Կոնգրեսը՝ 7 մանդատ, Հայկական վերածնունդ կուսակցությունը՝ 5 մանդատ եւ Ժառանգությունը՝ 4 մանդատ:

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Խորհրդարանական ընտրությունները կարգավորող իրավական դաշտը համապարփակ է, եւ այն հիմնականում կազմում են 1995 թ. Սահմանադրությունը (վերջին անգամ փոխվել է 2015 թ.), 2016թ. Ընտրական օրենսգիրքը եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) որոշումները: Իրավական դաշտը ներառում է նաեւ Կուսակցությունների մասին օրենքը, Հավաքների ազատության մասին օրենքը, Քրեական օրենսգիրքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, Վարչական դատավարության օրենսգիրքը եւ Սահմանադրական դատարանի մասին օրենքը: Բարեփոխումները, որոնց արդյունքում ընդունվել է 2016 թ. Ընտրական օրենսգիրքը, գնահատվել են որպես բոլոր կողմերի ներգրավվածությունն ապահովող գործընթաց, եւ որը ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծամասնության կողմից դիտարկվել է որպես քայլ առաջ ընտրական գործընթացի նկատմամբ ընդհանուր վստահությունը բարձրացնելու ուղղությամբ: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ի սկզբանե ներգրավված են եղել Ընտրական օրենսգրքի նախագծի քննարկումներում, բայց տեքստի վերջնական տարբերակին չեն համաձայնել, քանի որ նրանց կոչերը՝ մեղմելու տեղական դիտորդներին առնչվող սահմանափակումները հաշվի չեն առնվել:

Նոր Ընտրական օրենսգիրքը անդրադառնում է մի շարք ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի եւ ԵԽ-ի Վենետիկի հանձնաժողովի նախկինում արված հանձնարարականներին:[3] Այն նախատեսում է ընտրողների ինքնությունը հաստատող բարելավված մեխանիզմներ, ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակում, ընտրական մարմինների անկախությունը ամրապնդող միջոցներ: Նաեւ տեղական դիտորդների համար պարտադիր թեստավորումը վերացվել է եւ ընտրական ցուցակներում կին թեկնածուների քվոտան ավելացել է: Փոփոխությունների արդյունքում ավելի են հստակեցվել քարոզարշավի անցկացման,

[3] Տես՝ Հայաստանի ընտրական օրենսդրությանն առնչվող Joint Opinions of the OSCE/ODIHR and Venice Commission.

քարոզարշավի ֆինանսավորման, թեկնածուների գրանցման եւ դիմում-բողոքներին առնչվող կարեւոր դրույթներ:
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ Վենետիկի հանձնաժողովի նախկինում արված որոշ հանձնարարականներ հաշվի չեն առնվել. այդ թվում՝ թեկնածուների քաղաքացիության եւ մշտական բնակության պահանջներին, խորհրդարանում մանդատներ ստանալու համար դաշինքներին վերաբերող ընտրական արգելապատնեշին, թեկնածուների ցուցակներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկվելուն եւ բողոքարկելու իրավունքը սահմանափակող նորմերին առնչվող հանձնարարականներ:

Նոր ընտրական համակարգը խրթին է: Առնվազն 101 պատգամավոր ընտրվելու է երկաստիճան համամասնական ընտրակարգով՝ միասնական համապետական ցուցակից եւ 13 տարածքային ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուներից:[4] Մանդատներ ստանալու համար, քաղաքական կուսակցությունները պետք է հաղթահարեն հինգ տոկոսի արգելապատնեշը, իսկ կուսակցությունների դաշինքները՝ յոթ տոկոսի արգելապատնեշը: Առավել մեծ թվով ազգային փոքրամասնությունների համար (եզդիներ, ռուսներ, ասորիներ եւ քրդեր) համակարգը նախատեսում է ընդհանուր առմամբ չորս մանդատ:

Սահմանադրությանը համաձայն՝ կառավարություն ձեւավորելու համար անհրաժեշտ է «կայուն խորհրդարանական մեծամասնություն (որը սահմանվում է որպես բաշխված մանդատների ընդհանուր թվի 54 տոկոսը):[5] Եթե ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփումից հետո չի ձեւավորվում կայուն մեծամասնություն կամ հետագայում՝ 6 օրվա ընթացքում քաղաքական կոալիցիա չի կազմվում, քվեարկության օրվանից հետո՝ 28-րդ օրը կարող է անցկացվել երկրորդ փուլ, որին մասնակցելու են այն երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

V. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ընտրությունների անցկացման վարչարարությունը եռաստիճան է, եւ կազմում է՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ), 38 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸԸՀ) եւ 2,009 Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ):[6] ԿԸՀ-ն մշտապես գործող եւ պրոֆեսիոնալ մարմին է՝ կազմված յոթ անդամից, որոնք ընտրվում են խորհրդարանի կողմից վեց տարի ժամկետով: ԿԸՀ-ի բոլոր անդամները, այդ թվում՝ երեք կին անդամներ վերաընտրվել են 2016 թ. հոկտեմբերին պատգամավորների ձայների ճնշող մեծամասնությամբ: ԿԸՀ կազմը մտահոգություն է առաջացրել քաղաքացիական հասարակության շրջանում՝ նախորդ ընտրություններում իր՝ ենթադրաբար թերի աշխատանքի պատճառով: [7]

ԿԸՀ-ն պարբերաբար անցկացնում է բաց նիստեր, որոնք հեռարձակվում են առցանց եւ որոնք ներկա են լինում դիտորդներ, ԶԼՄ-ների եւ կուսակցությունների ներկայացուցիչներ: Որոշումները եւ օրակարգը հրապարակվում են ԿԸՀ-ի կայքում, թեեւ երբեմն որոշ ուշացումով:[8]

---

4 Համապետական ցուցակն ընտրելուց բացի, ընտրողը կարող է նաեւ նախապատվությունը տալ տարածքային ցուցակում ընդգրկված թեկնածուներից մեկին:

5 Կայուն խորհրդարանական մեծամասնություն ձեւավորելու համար, հաղթած ցուցակին կարող են տրվել լրացուցիչ մանդատներ:

6 Այս թիվը ներառում է քրեակատարողական հիմնարկներում տեղակայված 12 ՏԸՀ-ներ:

7 Տասնյոթ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ քննադատելով ԿԸՀ-ի նշանակումը:

8 ԿԸՀ-ի նորմատիվ որոշումները պետք է հրապարակվեն ինտերնետային կայքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից վերանայվելուց հետո: Արդյունքում, ԿԸՀ – ի որոշ որոշումներ հայտնվել են կայքում դրանց ընդունումից մեկ շաբաթ անց:

ԿԸՀ-ն պատասխանատու է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու եւ ԸԸՀ-ների, ՏԸՀ-ների, դիտորդների եւ վստահված անձանց համար նախատեսված ուղեցույցները հաստատելու, ինչպես նաեւ Ընտրական օրենսգրքի դրույթների որոշ պարզաբանման համար:[9]

ԿԸՀ-ն մշակել է ընտրողների համար իրազեկող նյութեր՝ քվեարկության օրվա նոր ընթացակարգերի մասին, այդ թվում՝ ժեստերի լեզվով, որոնք հեռարձակվելու են հանրային եւ մասնավոր լրատվամիջոցներով: Չնայած ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցները ողջունել են հանրության իրազեկման բարձրացմանը եւ օրենքի հետեւողական կատարմանն ուղղված ԿԸՀ-ի ջանքերը, ընտրություններին մասնակցող որոշ կուսակցություններ (դաշինքներ) եւ ՀԿ-ներ բարձրաձայնել են իրենց մտահոգություններն առ այն, որ ԿԸՀ-ն դժկամությամբ է արձագանքում հնարավոր վիճահարույց հարցերին:[10]

ԸԸՀ-ները, որոնք ձեւավորվել են 2016 թ., պրոֆեսիոնալ մարմիններ են, բաղկացած յոթ անդամից, որոնք նշանակվում են ԿԸՀ-ի կողմից վեց տարի ժամկետով: [11] Ըստ ԿԸՀ-ի, կանայք կազմում են ԸԸՀ-ների անդամների 35 տոկոսը, իսկ նրանց 16 տոկոսը զբաղեցնում են ղեկավար պաշտոններ[12]: ԸԸՀ-ները պատասխանատու են ՏԸՀ-ների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ՏԸՀ-ներին առնչվող բողոքների քննարկման, վերահաշվարկի եւ արդյունքների աղյուսակավորման համար: Օրենքով սահմանված վերջնաժամկետում՝ մարտի 11-ին, բոլոր ԸԸՀ-ները ձեւավորվել են համապատասխան ՏԸՀ-ների կողմից: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցներից շատերը հայտնել են իրենց վստահությունը ԸԸՀ-ների աշխատանքի առնչությամբ:

ՏԸՀ-ները պատասխանատու են քվեարկության կազմակերպման, արդյունքների հաշվարկի եւ քվեարկության արդյունքները ԸԸՀ-ներին փոխանցելու համար: ՏԸՀ-ների անդամները հիմնականում նշանակվում են խորհրդարանական կուսակցությունների կողմից ներկայացված թեկնածուներից:[13] ՏԸՀ-ների նախագահները եւ քարտուղարները նշանակվում են համամասնորեն՝ խորհրդարանում կուսակցությունների ունեցած մանդատների թվին համարժեք: Չնայած նրան, որ ՏԸՀ-ների պոտենցիալ անդամները վերապատրաստված են եւ նրանց նշանակումը հաստատված է, այնուամենայնիվ ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ զրուցակիցներ արտահայտել են մտահոգություն քվեարկության նոր խրթին ընթացակարգերի առնչությամբ՝ ՏԸՀ-ների կարողությունների վերաբերյալ:

VI. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, բացառությամբ դատարանի՝

---

9 ԿԸՀ-ի բոլոր իրավական պարզաբանումները տրամադրվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներկայացված պահանջի հիման վրա:

10 Օրինակ, ԿԸՀ-ն հրաժարվել է հստակեցնել թվացյալ ոչ հստակ իրավական դրույթները՝ այն ծրարները մարվելու ենթակա ճանաչելու վերաբերյալ, որոնք քվեաթերթիկներից զատ պարունակում են այլ նյութեր: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ զրուցակիցներ պնդում են, որ նման հստակեցումների բացակայությունը հնարավորություն է տալիս ՏԸՀ-ներին ընտրությունների գիշերը դիմել կամայական եւ ոչ ողջամիտ գործողությունների:

11 ԸԸՀ-ի անդամները ընտրվում են ինքնաառաջադրված, որակավորում ունեցող ընտրողներից:

12 Ըստ օրենքի, յուրաքանչյուր ԸԸՀ –ի առնվազն երկու անդամ պետք է լինեն մյուս սեռի ներկայացուցիչներ:

13 Յուրաքանչյուր խորհրդարանական կուսակցություն կամ դաշինք կարող է նշանակել մեկ անդամ յուրաքանչյուր ՏԸՀ-ում, իսկ համապատասխան ԸԸՀ-ն նշանակում է երկու անդամներ: Չկա ոչ մի գենդերային պահանջ ՏԸՀ-ի անդամների համար:

օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:[14] Բարեփոխված Սահմանադրության համաձայն, ոչ մեծ և միջին հանցագործությունների համար դատապարտվածներին նույնպես վերապահվում է ընտրելու իրավունք: Ընտրողների գրանցումը իրականացվում է պասիվ եղանակով, եւ ընտրողների ցուցակները հիմնված են Բնակչության պետական ռեգիստրի տվյալների վրա, որը գտնվում է Ոստիկանության Անձնագրային եւ վիզաների վարչության (ԱՎՎ) վերահսկողության ներքո եւ ներառում է Հայաստանում մշտական բնակություն ունեցող բոլոր ընտրողներին:[15] Ըստ մարտի 13-ի տվյալների, առկա է 2.564.244 ընտրող:[16]

Նախնական ընտրացուցակները հանրության վերահսկման համար փակցվել են ընտրատեղամասերում առ փետրվարի 21-ը: Օրենքի պահանջներին համապատասխան, նույն օրը ԱՎՎ-ն իր կայքում տեղադրել է ընտրողների ամբողջական ռեգիստրը:[17] Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչեւ մարտի 23-ը ընտրողների ցուցակներում տեղ գտած իր անձին կամ այլ անձանց առնչվող անճշտությունները վերացնելու մասին դիմում ներկայացնել լիազոր մարմին:[18] Հիմնվելով ընդդիմության եւ քաղաքացիական հասարակության պահանջների վրա, ինչպես նաեւ փորձելով կանխել մեկ այլ անձի փոխարեն քվեարկելու դեպքերը քվեարկության օրվանից հետո, ԿԸՀ-ն հրապարակելու է բոլոր ընտրատարածքներից ստացված սկանավորված ստորագրված ընտրողների ցուցակները՝ հնարավորություն ընձեռելով քվեարկած անձանց, ինչպես նաեւ փաստացի արտերկրում բնակվողներին, անցկացնել հանրային ստուգումներ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի բոլոր զրուցակիցներն այս քայլը համարում են խարդախության կարեւոր զսպիչ, անկախ այն մտավախությունից, որ դրանով իսկ բացահայտվում են ընտրողների անձնական տվյալները:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցներն ընդհանուր առմամբ դրական են գնահատել ընտրողների ցուցակների ճշգրտությունը եւ համապարփակ լինելը, միաժամանակ ընդունելով, որ ընտրողների զգալի մասը, ովքեր բնակվում են արտասահմանում, դեռեւս ընդգրկված են ընտրացուցակներում, քանի որ նրանք իրավունք ունեն հաշվառված լինել: Քաղաքական կուսակցությունների եւ քաղաքացիական հասարակության մի մասն արտահայտեցին իրենց մտահոգությունն առ այն, որ տարածքային թեկնածուները ճնշումներ են գործադրում ընտրողների վրա՝ փոխելու իրենց մշտական բնակության վայրը եւ գրանցվել այն տարածքներում, որտեղ առաջադրված են այդ թեկնածուները:[19] Այնուամենայնիվ, ԱՎՎ-ն հայտնել է, որ մինչ այժմ, համեմատած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ, հաշվառման հասցեների փոփոխության դիմումների էական աճ չի գրանցվել: Ընտրելու իրավունքի իրականացմանը նպաստելու համար, իրենց մշտական վայրում չբնակվող

---

14 Նախկինում, բոլոր նրանք, ովքեր գտնվում էին ազատազրկման վայրերում, զրկված էին քվեարկելու իրավունքից: Մարտի 7-ի դրությամբ, ընդհանուր առմամբ նախնական կալանքի տակ գտնվող 1145անձինք եւ 455 ազատազրկվածներ կարողանալու են քվեարկել քրեակատարողական հիմնարկներում: Մնացած մոտ 2,400 ազատազրկվածները, ովքեր գործել են ծանր հանցագործություններ, զրկված են քվեարկելու իրավունքից:

15 Ըստ օրենքի, մշտական գրանցում չունեցող ընտրողները կարող են գրանցվել քվեարկելու նպատակով, եթե դիմեն ԱՎՎ:

16 Ըստ 2011 թ. մարդահամարի, ընդհանուր առմամբ, 18 տարեկանից բարձր 2,190,686 քաղաքացիներ փաստացի բնակվում են Հայաստանում:

17. Հրատարակված տեղեկատվությունը ներառում է ընտրողների անունները, ծննդյան ամսաթվերը եւ հասցեները, ըստ տեղամասերի: ԱՎՎ-ն կհրապարակի ընտրողների վերջնական թարմացված ռեգիստրը քվեարկության օրվանից չորս օր առաջ:

18 Ընտրողները կարող են ավելացվել ընտրացուցակներում քվեարկության օրը ԱՎՎ-ի կամ դատարանի համապատասխան որոշման հիման վրա:

19 Ինչպես տեղեկացվել է ԵԱՀԿ/ԺՄԻԳԸ-ը, առնվազն երեք թեկնածուներ ճնշում են գործադրել ընտրողների վրա՝ վերագրանցվել Երեւանի համայնքներում:

ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ներկայացնում են դիմում ժամանակավոր բնակության վայրում քվեարկելու համար:[20]

Այլ անձի փոխարեն քվեարկելու եւ ընտրացուցակներում կեղծ գրանցումներ կատարելու հնարավոր կեղծիքները կանխելու համար, քվեարկության օրն ընտրողների ինքնությունը հաստատվելու է Ընտրողների նույնականացման էլեկտրոնային սարքավորումների (ԸՆՍ) միջոցով, որոնք պարունակում են ընտրացուցակների էլեկտրոնային տարբերակը: Ընտրողների անձը հաստատող փաստաթուղթը սկանավորվելու է, եւ ԸՆՍ-ն ստուգելու է, թե արդյոք ընտրողը գրանցված է տվյալ տեղամասում թե ոչ, եւ արդյոք ընտրողը նշված է համակարգում որպես արդեն իսկ քվեարկած: Ընտրողների մատնահետքերը նույնպես սկանավորվելու են եւ կարող են օգտագործվել՝ հետագայում միասնական ստուգում իրականացնելու նպատակով բազմակի քվեարկության մասին բողոքները քննելիս:[21]

ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծամասնությունը ԸՆՍ-ների կիրառումը գնահատում է դրական, թեեւ ոմանք նշել են, որ ծրագրային ապահովման ուշացումով մշակումը եւ փորձարկումը կարող է հանգեցնել ֆունկցիոնալ խնդիրների: ԿԸՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ ԸՆՍ-ների սահմանափակ ծավալով իրականացված փորձարկումը 2017թ. փետրվարի 12-ի տեղական ընտրությունների ժամանակ թույլ է տվել բացահայտել որոշ տեխնիկական խնդիրներ, սակայն քայլեր են ձեռնարկվել ի հայտ եկած թերությունները վերացնելու համար: ԿԸՀ-ն, ըստ դիմումի, տրամադրում է ԸՆՍ-ների հասանելիությունը եւ կողը քաղաքական կուսակցություններին, բայց ոչ հանրության ներկայացուցիչներին:

2016 թ. հունիսի 15-ի միջկուսակցական համաձայնագրից ելնելով, Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ ընտրատեղամասերի ներսում եւ նրանցից դուրս տեղադրվելու են տեսախցիկներ՝ քվեարկության օրվա ընթացակարգերը տեսագրվելի եւ համացանցով դիտարկելի լինելու համար: Քաղաքական կուսակցությունները եւ հավատարմագրված դիտորդները նույնպես կարող են պահանջել տեսագրված նյութերի օրինակները՝ իրենց հնարավոր բողոքները հիմնավորելու համար: Ֆինանսական սահմանափակումների պատճառով, տեսագրող սարքերը միայն տեղադրվելու են գրանցված ընտրողների 93 տոկոս կազմող 1500 խոշոր ընտրատեղամասերի ներսում:

VII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Թեկնածուների առաջադրման գործընթացը սկսվել է փետրվարի 6-ին եւ ավարտվել փետրվարի 16-ին: Բոլոր կողմերի ներգրավվածությունն ապահովող գործընթացի պայմաններում մինչեւ փետրվարի 26-ի վերջնաժամկետը, ԿԸՀ-ն գրանցել է բոլոր այն հինգ քաղաքական կուսակցություններին եւ չորս կուսակցությունների դաշինքներին, որոնք ներկայացրել էին ցուցակները: [22]

Պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի քաղաքացի հանդիսացող եւ մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող եւ

[20] Մարտի13 դրությամբ, 1249 ընտրողներ դիմել են նման խնդրանքով:

[21] Քրեական օրենսգիրքը սահմանում է ազատազրկում՝ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին կեղծ հայտարարություններ տալու համար՝ կատարված թե՛ անփութությամբ, թե՛ դիտավորությամբ:

[22] ՀՅԴ-ն, Հայկական վերածնունդ (ՀՎ), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ), Կոնգրես-Հայկական ժողովրդական կուսակցության դաշինքը (ԿՀԺԿդ), Ազատ դեմոկրատներ (ԱԴ), Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան դաշինք (ՕՌՕ), ՀՀԿ, Ծառուկյան դաշինքը (ԾԱ), եւ Ելք դաշինք:

հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:[23] Պատգամավորի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, զինծառայողները, ոստիկանության ծառայողները, այլ պետական ծառայողական պաշտոն զբաղեցնող անձինք եւ ընտրական հանձնաժողովների անդամները:

Թեկնածուների ցուցակները ներկայացվում են քաղաքական կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների կողմից եւ կարող են ներառել կուսակցության անդամ չհանդիսացող անձանց: [24] Յուրաքանչյուր մասնակից ներկայացնում է ոչ պակաս քան 80 թեկնածուների միասնական համապետական ցուցակ եւ 13 տարածքներին համապատասխանող ընտրական ցուցակ:[25] Բացի այդ, համապետական ընտրական ցուցակները կարող են ներառել առանձին մաս՝ առավել մեծ թվով մշտական բնակություն ունեցող առաջին 4 ազգային փոքրամասնությունից մինչեւ 4 ներկայացուցիչ ներառելու համար:[26] Ընտրություններին մասնակցող կուսակցությունները եւ դաշինքները պետք է նաեւ վճարեն դրամական գրավ, որը ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 4 կամ ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու դեպքում վերադարձվում է:[27]

Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները (դաշինքները) համապատասխանում են այն իրավական պահանջին, ըստ որի համապետական ցուցակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է լինի 25% -ից պակաս, եւ յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչ պետք է ներկայացված լինի ցանկացած ամբողջ թվով քառյակներում: Գենդերային քվոտան գործում է ե՛ւ գրանցման, ե՛ւ բաշխման, ե՛ւ թափուր մանդատների լրացման դեպքում: Մոտավորապես 30 տոկոսը 1,558 գրանցված թեկնածուների կանայք են:

VIII. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Պաշտոնական քարոզարշավը մեկնարկել է մարտի 5-ին եւ ավարտվում է քվեարկության օրվանից 24 ժամ առաջ:[28] Քարոզարշավի մեկնարկը դանդաղ էր, իսկ ընթացքն ակտիվացել է միայն վերջերս: Ընտրական օրենսգիրքը նախատեսում է հավասար հնարավորություններ մասնակիցների համար պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում, այդ թվում հանրային ռեսուրսների հավասար հասանելիության, անվճար եւ վճարովի եթերաժամի, պաստառների փակցման համար նախատեսված վայրերի եւ ընտրողների հետ հանդիպելու համար տարածքների տրամադրման հարցում: Պետական ծառայողներին արգելվում է իրականացնել քարոզչություն իրենց պաշտոնական լիազորութոյունները իրականացնելիս:[29] Ընտրական շտաբերը չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման

---

23 Լեզվի իմացությունը կարող է հաստատվել միջնակարգ կամ բարձրագույն կրթության առկայության դեպքում կամ թեստավորման միջոցով: Լեզվի իմացության թեստը կազմվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից, որը տեղեկացրել է ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ բոլոր 11 թեկնածուները, ովքեր մասնակցել են քննությանը, ստացել են հայոց լեզվի իմացության հավաստագրեր:

24 Ըստ ԿԸՀ-ի, առաջադրված թեկնածուների տասնհինգ տոկոսը անկուսակցական են:

25 15000 ընտրողների համար տարածքային ցուցակում կառաջադրվի առավելագույնը 1 թեկնածու: Տարածքային թեկնածուները պետք է ընդգրկվեն համապետական ցուցակում:

26 Միայն ՀՎ-ը, ԿՀԺԿԴ-ը, ՀՀԿը եւ ԾԴ-ն թեկնածուներ են առաջադրել ազգային փոքրամասնության ցուցակում: Որոշ կուսակցություններ նշել են, որ իրենք հանդիպել են դժվարությունների գտնել այնպիսի թեկնածուներ ազգային փոքրամասնություններից, որոնք հավատարիմ չեն իշխող կուսակցությանը:

27 Գրավը կազմում է 10 մլն ՀՀ դրամ (մոտ 19,450 եվրո): 1 եվրոն մոտավորապես 514 ՀՀ դրամ է:

28 Չնայած նրան, որ մինչեւ քարոզչության պաշտոնական մեկնարկը քարոզչություն իրականացնելու ոչ մի իրավական արգելք առկա չէ, մինչեւ մարտի 5-ը առկա չէին ակնհայտ քարոզչական գործողություններ, բացառությամբ ՀՀԿ վահանակները, որոնք տեսանելի էին Երեւանում:

29 Օրինակ, Գեղարքունիքի եւ Վայոց Ձորի մարզպետներ, Ագարակ (Մեղրի) եւ Հրազդանի քաղաքապետերը, եւ Կոտայքի երեք փոխմարզպետները արձակուրդ են վերցրել, որպեսզի կարողանան իրենց ամբողջ ժամանակը նվիրել քարոզչությանը:

մարմինների զբաղեցրած շենքերում, նաեւ արգելվում է փակցնել քարոզչական պաստառները պետական ենթակայության շենքերի վրա:[30]

Մարտի 8-ին ԿԸՀ-ն բանավոր զգուշացրել է մասնակցող կուսակցությունների դաշինքից մեկին, որը քարոզարշավի ընթացքում խոստացել է ապրանքներ եւ ծառայություններ, եւ հայտարարել է, որ համապատասխան միջոցներ է ձեռնարկելու նման խախտումների կրկնության դեպքում:[31] Ընտրական օրենսգիրքը չի նախատեսել աստիճանական պատժամիջոցներ քարոզչության ընթացքում թույլ տված խախտումների համար. նման դեպքերում կիրառվում է նախազգուշացում կա՛մ գրանցումը կորցնում է ուժը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ–ի զրուցակիցների մեծամասնության կողմից համատարած մեղադրական հայտարարություններ են հնչեցվել ընտրակաշառքի առաջարկման դեպքերի կապակցությամբ:[32] Բավականին տարածված է նաեւ ընկալումն առ այն, որ քարոզարշավն իրականացվելու է ընտրողների ճնշման եւ վախի մթնոլորտի համատեքստում, այդ թվում նաեւ վարչական ռեսուրսների չարաշահման միջոցով:[33]

Ելնելով իրենց առկա ռեսուրսներից, քաղաքական կուսակցությունները քարոզում են հանրահավաքների, մեքենաների շքերթների, դռնեդուռ այցելությունների, քարոզչական պաստառների, ԶԼՄ-ներում տեղադրված գովազդների եւ սոցիալական մեդիայի միջոցով՝ գործազրկության, ենթակառուցվածքների եւ ներդրումների, ինչպես նաեւ ազգային անվտանգությանը առնչվող ուղերձների օգտագործմամբ:[34] Շատ մասնակիցներ տեղեկացրել են ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ քարոզարշավի ռազմավարության եւ նյութերի մշակման հարցում նրանք ապավինում են կուսակցության կամ դաշինքի կենտրոնական շտաբի դիրքորոշմանը: Պայքարող ուժերի մեծամասնությունը հրապարակել է նախընտրական ծրագրերը իրենց կայքերում: Կանայք ակտիվ են քարոզարշավի ընթացքում, որպես թեկնածուներ, սակայն, նրանք հազվադեպ են նախընտրական շտաբում զբաղեցնում ղեկավար պաշտոններ:

Օրենքին համաձայն՝ բոլոր մասնակիցները բացել են հատուկ հաշվեհամար՝ իրենց քարոզչության ֆինանսավորման հետ կապված գործարքները իրականացնելու համար: Քարոզչության միջոցները ձևավորվում են ընտրողների կամավոր մուծումներից եւ կուսակցությունների ու թեկնածուների անձնական միջոցներից:[35] Չեն թույլատրվում մուծումներ՝ կատարված իրավաբանական անձանց, ինչպես նաեւ օտարերկրյա եւ անանուն աղբյուրների կողմից: Օրենքը սահմանափակում է քարոզչական ծախսերը յուրաքանչյուր մասնակցի համար 500 մլն ՀՀ դրամի չափով՝ առաջին փուլի համար եւ լրացուցիչ 200 մլն ՀՀ դրամ՝ հնարավոր երկրորդ փուլի համար:

---

30 Փետրվարի 24-ին ԿԸՀ-ն հրապարակել է օրենքով սահմանված քարոզարշավային միջոցառումների համար նախատեսված տարածքների ցանկ:

31 ԾԱ-ն նախազգուշացվել է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19.6 հոդվածի խախտման կապակցությամբ Տավուշի մարզում հանրահավաքի ընթացքում ընտրողներին ծառայություններ եւ ապրանքներ խոստանալու համար:

32 Սույն զեկույցի պատրաստման պահն ընտրակաշառքի քննվող 24 դեպքից 19 հերքվել է ապացույցների բացակայության հիմքով: *Տես՝ դիմումների եւ բողոքների:*

33 ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ստացել է արժանահավատ հաղորդումներ Սյունիքի մարզում ընտրողների ահաբեկման վերաբերյալ: Մարտի 10-ին, Ագարակ եւ Քաջարան գյուղերի ընտրողները, որոնք փորձում էին մասնակցել Ելք-ի նախընտրական քարզարշավին, ահաբեկվել են իրենց գործատուի ներկայացուցիչների կողմից:

34 ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դիտարկել է 26 հանրահավաքներ՝ ՀՎ (3), ԱԴ (3), ՕՐՕ (3), ՀՀԿ (4), ԾԴ (8), եւ Ելք (5):

35 Համապատասխանաբար, 500,000 ՀՀ դրամ, 5 մլն ՀՀ դրամ, եւ 100 մլն ՀՀ դրամ: Օրենքը հստակորեն չի կարգավորում բնաիրային նվիրատվություններ ստանալը:

Մասնակիցները պետք է ներկայացնեն երկու ֆինանսական հայտարարագիր մինչեւ քվեարկության օրը, որոնք հրապարակվում են ԿԸՀ-ի կայքում:[36] Չնայած ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ նախկինում արված հանձնարարականի, այսպես կոչված շտաբերի, տրանսպորտի եւ հաղորդակցման հետ կապված կազմակերպչական ծախսերը չեն ներառվում հայտարարագրերում: ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (ՎՎԾ) լիազորված է վերահսկել եւ ապահովել մասնակիցների դրամական միջոցների ամբողջականությունն ու թափանցիկությունը:[37] Վեց առդիտորներ, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից, նշանակվել են խորհրդարանական կուսակցությունների կողմից համագործակցելու ՎՎԾ-ի հետ քարոզարշավի ֆինանսավորման հարցերի շուրջ:

IX. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Խոսքի ազատությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ եւ օրենսդրությամբ: Ըստ լրատվական ՀԿ-ների, դատական մի շարք գործերում, որտեղ քննվում էր հանրային տեղեկատվության հասանելիության հարցը, դատարանները որոշում են կայացրել հօգուտ հայցվորի, թեեւ որոշ լրատվամիջոցների մասնագետներ հաղորդել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իշխանությունների կողմից պատասխանը տեղեկատվական հարցումներին եղել է ոչ բավարար: Զրպարտությունն ապաքրեականացվել է 2010 թ.-ին, փոխարենը, քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է վնասների փոխհատուցում՝ մինչեւ 2 մլն ՀՀ դրամ չափով: Լրատվական ՀԿ-ները տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ 2011թ.-ի Սահմանադրական դատարանի որոշումն ընդունելուց հետո, որով խրախուսվեց ոչ նյութական միջոցների օգտագործումը, ինչպիսիք են հրապարակավ ներողություն խնդրելը եւ հերքելը, զրպարտությանը վերաբերող քաղաքացիական գործերի թիվը պակասել է:

Լրատվական միջավայրը բնութագրվում է որպես սահմանափակ գովազդային շուկա՝ ընդամենը մի քանի ինքնաբավ լրատվամիջոցների առկայությամբ: Խոշոր մասնավոր հեռուստատեսությունները ֆինանսավորվում են բիզնեսի եւ քաղաքական խմբերի կողմից եւ ընկալվում են իբրեւ կառավարության հետ խիստ կապակցված, ինչպես օրինակ՝ հանրային հեռուստաընկերությունը: Լրագրողները տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին խմբագրական անկախության միջամտության, ինքնագրաքննության եւ կառավարության գործունեության քննադատական լուսաբանումը հեռուստատեսությամբ չխրախուսելու մասին:

Համացանցային ազատության, ինչպես նաեւ առցանց լրատվական աղբյուրների նկատմամբ չկա միջամտություն, ինչը նպաստում է քաղաքական բազմակարծության եւ կառավարության գործունեության քննադատական լուսաբանման աճին: Որոշ առցանց լրատվամիջոցներ, որոնք ֆինանսավորվում են միջազգային դոնորների կողմից, ապահովում են խորքային եւ հետաքննական լրագրության հնարավորություն:[38] Վերջին շրջանում լրագրողների նկատմամբ իրավապահ մարմինների կողմից բռնության կիրառման մի շարք դեպքեր չեն քննվել:[39]

---

36 Ըստ ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների, մարտի 10-ի դրությամբ, քարոզչական նպատակների համար ՀՀԿ-ն ծախսել է 125 մլն ՀՀ դրամ,ՕՐՕ-ն՝ 38 մլն ՀՀ դրամ, ԾԴ-ն՝ 25 մլն ՀՀ դրամ, իսկ մնացած մասնակիցներ հավաքականորեն ծախսել են 34 մլն ՀՀ դրամ:

37 Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ ՎՎԾ-ն պարտավոր է գործել ընտրական հանձնաժողովներից անկախ եւ հաշվետու չի նրանց, սակայն օրենքը հստակ չի սահմանված դրա ինստիտուցիոնալ կարգավիճակը:

38 Hetq.am, Ազատություն ռադիոկայան, եւ Civilnet.am.

39 ԶԼՄ-ների ազատության ԵԱՀԿ-ի ներկայացուցիչը կոչ է արել պաշտպանել լրագրողների իրավունքները՝ ապահովելով լրագրողների անվտանգության երաշխիքները եւ լրագրողների ներգրավմամբ միջադեպերի մանրակրկիտ հետաքննությունը:

Փետրվարի 27-ին ԿԸՀ-ն յուրաքանչյուր մասնակցին հատկացրել է ընդհանուր առմամբ 60-ական եւ 120 րոպե անվճար եթերաժամանակ հանրային հեռուստաընկերությամբ (Հ1) եւ հանրային ռադիոյով, համապատասխանաբար: Կուսակցությունները իրավունք ունեն նաեւ հավասար պայմաններով ձեռք բերել վճարովի քաղաքական գովազդի եթերաժամանակ հանրային եւ մասնավոր հեռուստատեսություններում:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ հանրային եւ մասնավոր հեռուստատեսություններով եւ ռադիոյով հեռարձակվող լրատվական ծրագրերը պետք է տրամադրեն "անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն" թեկնածուների քարոզարշավների վերաբերյալ: Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ), որին հանձնարարված է վերահսկել լրատվությանն առնչվող դրույթների իրականացումը քարոզարշավի ընթացքում եւ մշտադիտարկել հեռարձակողներին, չի պարզաբանում այս դրույթը:[40] ԶԼՄ-ների ներկայացուցիչները տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ նրանք մեկնաբանում են այս դրույթը որպես յուրաքանչյուր հաղորդման շրջանակներում յուրաքանչյուր մասնակցին քարոզարշավի հավասար քանակությամբ լուսաբանման պարտավորություն: Մարտի 5-ին ՀՌԱՀ-ը սկսել է ընտրական քարոզարշավի լուսաբանման քանակական մշտադիտարկումը եւ հրապարակելու է երկու զեկույց քարոզարշավի ընթացքում եւ եւս մեկը՝ ընտրություններից հետո: Փետրվարի 24-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսել է լրատվամիջոցների որակական եւ քանակական մշտադիտարկումը:[41] Վերոհիշյալ մշտադիտարկման համաձայն, մինչ օրս, պայքարող ուժերը Հ1-ով ստացել են հավասար եթերաժամանակ:

X. ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Ըստ Ընտրական օրենսգրքի՝ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները եւ անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողովում, իսկ ԿԸՀ-ի դեմ ներկայացված բողոքները ընդդատյա են Վարչական դատարան:[42] Ընտրությունների վերջնական արդյունքներին վերաբերող դիմումները կարող են ներկայացվել միայն Սահմանադրական դատարան:[43] Ընտրողների ցուցակների ճշգրտման հետ կապված բողոքները կարող են ներկայացվել Անձնագրային եւ վիզաների վարչություն, իսկ վերջինիս որոշումը հետագայում կարող է բողոքարկվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում:

Հակառակ ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ–ի նախորդ հանձնարարականների, բողոք ներկայացնելու իրավունքի վերաբերյալ նորմերը շարունակում են մնալ սահմանափակ: Բողոքներ կարող են ներկայացվել ընտրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների եւ դիտորդների կողմից՝ իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ, ինչպես նաեւ վստահված անձանց եւ հանձնաժողովի անդամների կողմից՝ իրենց իրավունքների ու կուսակցությունների, թեկնածուների եւ շահագրգիռ կողմերի իրավունքների խախտումների վերաբերյալ: Ընտրություններին մասնակցող կուսակցությունները, վստահված անձինք (եթե նրանք ներկա են

---

40 Հունվարի 18-ին, ՀՌԱՀ-ը հրապարակել է «մշտադիտարկման մեթոդաբանությունը» կապված իրավական դրույթների կիրառման հետ, բայց չի հստակեցնել «անկողմնակալ եւ անաչառ տեղեկատվություն» եզրույթը:

41 Մշտադիտարկված լրատվամիջոցները ներառում են՝Հ1 (Հանրային Հեռուստաընկերություն), Արմենիա, Կենտրոն, Շանթ TV, եւ Երկիր Մեդիա (մասնավոր հեռուստաալիքները), եւ երեք առցանց լրատվական աղբյուրներ aravot.am, armtimes.com եւ Hetq.am.

42 Ընտրություններին առնչվող բոլոր բողոքները նույնպես կարող են ներկայացվել դատարան, սակայն, ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի եւ Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականներին համահունչ, Ընտրական օրենսգիրքը այժմ սահմանում է, որ բողոքները չպետք է զուգահեռաբար քննարկվեն ընտրական հանձնաժողովներում եւ դատարաններում:

43 Այդպիսի բողոք կարող է ներկայացվել Սահմանադրական դատարան վերջնական արդյունքների հրապարակումից հետո հինգերորդ օրը, որն 15 օրվա ընթացքում պետք է որոշում կայացնի: Պարզ չէ, թե, արդյոք բողոքները կարող են ներկայացվել ավելի վաղ, քան հինգերորդ օրը:

գտնվել քվեների հաշվարկի ընթացքում) եւ ընտրատեղամասային հանձնաժողովի անդամները կարող են բողոքարկել ընտրատեղամասում քվեարկության արդյունքները վերադաս տարածքային հանձնաժողովներ, իսկ վերջիններիս որոշումները՝ Վարչական դատարան: Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունները եւ ոչ թե ընտրողները կարող են բողոքարկել ընտրությունների վերջնական արդյունքները:

Առ այսօր ԿԸՀ-ն եւ ԸԸՀ-ները չեն ստացել որեւէ բողոք, իսկ Վարչական դատարան է ներկայացվել երկու հայց երկու թեկնածուների կողմից՝ չորս տարվա բնակությունը հաստատող տեղեկանքը չտրամադրելու որոշումը բողոքարկելու նպատակով: Մի դեպքում հայցվորը հետ է վերցրել իր հայցը, իսկ մյուսի պարագայում այն մերժվել էր դատարանի կողմից՝ որպես անհիմն:[44] Գործերը քննվում են դռնբաց նիստերում, իսկ որոշումները հրապարակվում են առցանց:

Գլխավոր դատախազի կողմից ստեղծվել է աշխատանքային խումբ՝ քննելու ընտրախախտումներ:[45] Առ այժմ խումբն ուսումնասիրել է մոտավորապես 130 դեպք, որոնք հիմնականում առնչվում են ընտրակաշառքներին եւ ընտրական իրավունքի խոչընդոտմանը, 31 դեպք ուղարկվել է ոստիկանություն հետագա հետաքննության համար, իսկ մնացածը հերքվել են որպես անհիմն: [46]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծ մասը նշել է, որ հանրության մեջ առկա է դժկամություն՝ ընտրախախտումների վերաբերյալ հաղորդում տալու առումով՝ ընտրական վարչարարության, դատարանների եւ իրավապահ մարմինների անաչառ եւ արդյունավետ գործունեության հանդեպ վստահության բացակայության պատճառով:

XI. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

Օրենսդրությունը սահմանում է միջազգային եւ տեղական դիտորդություն իրականացնելու հնարավորություն եւ իրավունք է ընձեռում վստահված անձանց ներկա գտնվել ընտրատեղամասերում: Հավատարմագրման համար, տեղական դիտորդական կազմակերպությունները պարտավոր են ընդունել իրենց դիտորդների վարքագծի կանոններ եւ կազմակերպել ուսուցում: Բացի այդ, նոր Ընտրական օրենսգիրքը պահանջում է տեղական դիտորդական կազմակերպություններին իրենց կանոնադրության մեջ ներառել ժողովրդավարության եւ մարդու իրավունքների պաշտպանության հստակ նպատակներ՝ ընտրություններ նշանակելու օրը նախորդող նվազագույնը մեկ տարի առաջ: Փետրվարի 22-ին ԿԸՀ-ն մերժել է Քաղաքացիական շտաբի հավատարմագրումը, քանի որ վերջինս չի համապատասխանում վերոնշյալ օրենքի պահանջներին:[47] Մարտի 14-ի դրությամբ, ԿԸՀ-ն

---

44 Առաջին դեպքում, դիմումատուն չի բավարարել քառամյա կացության պահանջը Միավորված ազգերի կազմակերպությունում որպես մասնավոր խորհրդատու աշխատանքի պատճառով, իսկ երկրորդ դիմումատուն չի կարողացել ներկայացնել պաշտոնական ապացույց արտերկրում իր ուսումնելու վերաբերյալ:

45 Պնդումները հիմնված են տարբեր լրատվամիջոցների մշտադիտարկման, քաղաքացիներից թեժ գծով ստացված ահազանգերի եւ անհատական հաղորդումների հիման վրա: Օրենքը չի նախատեսում արագացված վերջնաժամկետներ հետաքննելու ընտրախախտումների հետ կապված հանցանքներն ընտրական ժամանակահատվածի ընթացքում:

46 Նախկինում ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդելու քաղաքացիների դժկամության պատճառով, 2016թվ. Քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններն ապաքրեականացրել են կաշառքի ստացումը, եթե դրա մասին կատարվում է հաղորդում, որը համահունչ է նախկինում ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ- ի հանձնարարականին:

47 Այս կազմակերպությունը նախկինում եղել է հավատարմագրված եւ դիտարկել է տեղական ընտրությունները 2016 թ. հոկտեմբերին:

հավատարմագրել է 18 տեղական կազմակերպություններ՝ ընդհանուր առմամբ 7,386 դիտորդներ, ինչպես նաեւ 42 միջազգային դիտորդների:[48]

Ընտրատեղամասերում կուտակումների հնարավոր դեպքերը հասցեագրելու նպատակով Ընտրական օրենսգիրքը լրացվել է՝ նախատեսելով տեղական դիտորդների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների ընտրատեղամասերում գտնվելու թվաքանակի վերաբերյալ հնարավոր սահմանափակումներ: Նման սահմանափակումներ կարող են կիրառվել միայն ՏԸՀ-ների անդամների մեծամասնության համաձայնության դեպքում, և ամեն դեպքում սահմանված թիվը չի կարող նվազ լինել 15-ից:[49] Քաղաքացիական հասարակության և ԶԼՄ-ների ներկայացուցիչները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին մտահոգություններ են հայտնել առ այն, որ նշված սահմանափակող դրույթները, այդ թվում ընտրատեղամասերում դիտորդների թվաքանակի սահմանափակումը չունի իրավական հստակություն և տեղ է տալիս կամայական կիրարկման համար: Որոշ ՀԿ-ներ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ հավատագրման համար դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետը՝ քվեարկության օրվանից 15 օր առաջ դիտորդներին մոբիլիզացնելու առումով ստեղծելու է դժվարություններ:

XII. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն փետրվարի 21-ին մամլո ասուլիսով պաշտոնապես մեկնարկել է իր աշխատանքները Երեւանում: Ընտրությունների դիտորդական առաքելությունը հանդիպել է Հանրապետության Նախագահի, Արդարադատության նախարարի, Արտաքին գործերի նախարարի տեղակալի, Սահմանադրական դատարանի նախագահի, ԿԸՀ-ի նախագահի, Գլխավոր դատախազի եւ քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության եւ միջազգային համայնքի ներկայացուցիչների հետ: ԸԴԱ-ն նաեւ մշտական հիմքերի վրա կապ է հաստատել ԿԸՀ-ի, ԸԸՀ-ների, ընտրական գործընթացում ներգրավված հանրապետական եւ տեղական պետական մարմինների, ինչպես նաեւ քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Քվեարկության օրը դիտորդական աշխատանքները իրականացնելու համար ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին միանալու են ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի եւ Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունները: Պարոն Խոսե Իգնասիո Սանչես Ամորը Իսպանիայից նշանակվել է ԵԱՀԿ գործող նախագահի կողմից որպես կարճաժամկետ դիտորդների հատուկ համակարգող:

Սույն զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը
Հայերեն լեզվով հասանելի է սույն փաստաթղթի ոչ պաշտոնական տարբերակը

---

48 Ընտրությունների դիտարկման մեջ ներգրավված որոշ միջազգային ՀԿ-ներին պաշտոնապես չի տրամադրվել հրավերը՝ դիտարկել այս ընտրությունները այն ֆորմալ բացատրությամբ, որ լրացուցիչ դիտարկման անհրաժեշտություն չկա:

49 Այդ սահմանափակումը չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա: